ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ը/40/1726-25 առ «11» 07 2025թ.

«Ասպարեզ» ՍՊԸ
Տնօրեն
Հ. Պողոսյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-141/24-01/330 պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Պողոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության և «Ասպարեզ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հոկտեմբերի 10-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-141/24-01/330 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի «Ասպարեզ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ չափաբաժնով նախատեսված թղթյա ժապավենային դիագրամը (Պայմանագրի 1.1 կետ):

Պայմանագրով սահմանված է.

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 1-ով ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված է՝ պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, սակայն Պայմանագրի Հավելված 1-ի 2-րդ չափաբաժնով սահմանված բնութագրով ապրանքը մինչ օրս մատակարարված չէ:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կողմից միակողմանի մասնակի (երկրորդ չափաբաժնի մասով) լուծվում է «ՀԱԷԿ» ՓԲ և «Ասպարեզ» ՍՊ ընկերությունների միջև 2024 թվականի

հոկտեմբերի 14-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-141/24-01/330 պայմանագիրը և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (180 000 ՀՀ դրամ) և որակավորման (270 000 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91